23 մարտի 2017 թվականի N 312 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1044-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21.1-ին, 21.2-րդ և 21.3-րդ կետերով.

«21.1. Սույն կանոնակարգի 5-րդ կետի 5-րդ, 14-րդ, 15-րդ, 19-րդ և 20-րդ ենթակետերով սահմանված խնդրահարույց դեպքերում համագործակցող կողմը սույն կանոնակարգի 7-րդ կետում սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է տրամադրում սույն կանոնակարգի 11-րդ կետի՝

1) 4-րդ ենթակետով սահմանված տվյալները.

2) 6-րդ ենթակետի շրջանակներում ստորև նշված խնդրահարույց դեպքերի համար հետևյալ տվյալները՝

NN ը/կ	Խնդրահարույց դեպքը	Ծածկագիրը (գաղտնի)	Համագործակցող կողմը	Վարքի առանձնա-հատկու-թյունները
1.	Հայաստանի Հանրապետության պաշտ-պանության մարտական գործողություն-ների հետևանքով, մարտական հերթա-պահություն և հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականու-թյունները (միայն զինծառայողների մասով) կատարելիս զինծառայողի կամ կամավորականի հաշմանդամություն ձեռք բերելը		ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտ-պանության վար-չություն	X
2.	Հայաստանի Հանրապետության պաշտ-պանության մարտական գործողություն-ների հետևանքով, մարտական հերթա-պահություն և հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություն-ները (միայն զինծառայողների մասով) կատարելիս զինծառայողի կամ կամա-վորականի զոհվելը (մահանալը) կամ անհայտ կորած համարվելը		ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչություն	X
3.	«Ենթադրյալ» ոնտանեկան բռնության ենթարկված անձ հայտնաբերելը		ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	X
4.	Անձի հոգեկան առողջության խնդիրներ ունենալը (հոգեկան և վարքի խանգա-րումների դասին համապատասխանող հոգեկան անառողջ վիճակներ կամ վարքի խանգարումներ)		«Սևանի հոգեբու-ժական հիվանդանոց» ՓԲԸ (համաձայնությամբ) «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) «Նորք» հոգեբու-ժական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ)	
5.	Ալկոհոլային խմիչքների օգտագործումը չարաշահելը (ալկոհոլի գործածում վնա-սակար (կործանարար) հետևանքներով)		«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ)	
5.1.	Ալկոհոլային խմիչքների օգտագործումը չարաշահելու վտանգի առկայությունը		«Նարկոլոգիական հանրապետական	

			կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	
6.	Թմրամիջոցներ և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելը		«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ)	
6.1.	Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգե-ներգործուն) նյութերի գործածումը դա-դարեցրած անձ՝ գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում կամ հաջողու-թյամբ ավարտել է բուժման կուրսը		«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ)	
6.2.	Թմրամիջոցներ և (կամ) հոգեմետ (հոգե-ներգործուն) նյութեր օգտագործելու վտանգի առկայությունը		«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	

21.2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սույն կանոնակարգի 21.1-ին կետով սահմանված տվյալներն ստանալուց հետո եռօրյա ժամկետում սոցիալական աջակցության համապատասխան տարածքային գործակալությանը (բաժնին) է փոխանցում 21.1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն ստացված տվյալները և 2-րդ ենթակետով ստացված տվյալներից՝ ծածկագրերը և վարքի առանձնահատկությունները:

21.3. Սույն կանոնակարգի 21.1-ին կետով սահմանված տվյալները տրամադրելու համար սոցիալական աջակցության կարիք ունեցող անձից համաձայնություն ստանալու գործընթացը կազմակերպում է համապատասխան համագործակցող կողմը:»:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ը ապահովել սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման հավելվածի 21.1-ին կետում նշված խնդրահարույց դեպքերի վարումն ապահովող պահանջների կիրառումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ